ԿԱՐԾԻՔ

Սյուզաննա Սոսի Բարսեղյանի՝ «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Փաստ է, որ ժամանակակից հայկական սփյուռքը միատարր չէ, և այնտեղ գործ ունենք դասական և ժամանակակից սփյուռքների տարբեր սերունդների, նրանց ենթաէթնիկ, ունեցվածքային, սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, կրթական խմբերի հետ: Նրանց երրորդ, չորրորդ կամ հինգերորդ սերունդները, ապրելով և հարմարվելով նոր սոցիալ-մշակութային միջավայրում, դարձել են բազմալեզվության և բազմամշակութայնության կրողներ: Եթե սրան ավելացնենք նաև հայրենիքի հետ համացանցի միջոցով նրանց մշակութային և անդրազգային լայն կապերը, որոնք ապահովում են նրանց վիրտուալ վերադարձ և մասնակցություն հայաստանյան կյանքին, ապա առաջին հայացքից թվում է, թե շատ դժվար է այս ամենում քննարկել և բացահայտել էթնիկ մեդիայի դերը և նրա կարևորությունը սփյուռքյան ինքնության ձևավորման գործում: Այդ խնդիրն ավելի է բարդանում, երբ այն դիտարկում ենք նաև ավանդական սփյուռքում ձևավորված կառույցների և կազմակերպությունների, դրանց գործունեությանը չմասնակցող և 1990-ական թվականներից հետո սփյուռքը համալրած՝ Հայաստանից բնակչության միգրացիոն հոսքերի տեսանկյունից: Ս. Բարսեղյանը «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» ատենախոսությունում, ի պատիվ իրեն, ասենք, որ կարողացել է գտնել այս և նմանատիպ մի շարք հարցերի գիտականորեն հիմնավորված պատասխաններ: Իմ համոզմամբ՝ Ս. Բարսեղյանը այդ հանգրվանին հասել է շնորհիվ այդ ոլորտում ունեցած հարուստ հետազոտական փորձի և ատենախոսությունում կիրառած սկզբունքային մի քանի կարևոր մոտեցումների: Նախ՝ մեթոդի և դրան առնչվող ընթացակարգերի ճիշտ կիրառումը (տե՛ս հավելված, բովանդակության վերլուծության գործիքակազմ): Հեղինակը կիրառել է փաստաթղթերի վերլուծության մեթոդը և բովանդակային վերլուծության է ենթարկել Լոս Անջելեսի համայնքի «Ասպարեզ», Թեհրանի համայնքի «Ալիք» և

Մոսկվայի համայնքի «Новый Ковчег» թերթերը, ինչպես նաև մանրամասն հիմնավորել դրանց ընտրությունը: Ուզում եմ անդրադառնալ այդ մեթոդի կիրառման մի քանի առավելությունների՝ թերթը, որպես փաստաթուղթ, օգտվելու համար մատչելի է և հեշտությամբ կարելի է գտնել գրադարաններում, տեղեկատվության կայուն աղբյուր է և հարցման մասնակցի կարծիքի նման փոփոխվող չէ, փոխազդեցության ընթացքում արձագանքող չէ և այլն: Բայց կարևոր է նաև հեղինակի կողմից այս մեթոդի կիրառման թերությունների հաղթահարումը քննադատական մոտեցման շնորհիվ (օրինակ՝ խմբագիրների կողմից նյութը և իրադարձությունները ընտրվի և հատվածաբար ներկայացնելը): Երկրորդ՝ շատ եմ կարևորում նաև հեղինակի՝ այդ մեթոդով ստացված նյութերի հետ աշխատանքը: Նա քվոտային ներկայացուցչական ընտրանքով վերլուծել է նշված երեք պարբերականների վեց տարվա՝ 2005-2010 թթ. հրապարակումները, որի ընտրանքային համախմբությունը կազմել է թերթերի 312 համար, և վերլուծվել է 4635 հոդված: Հոդվածների այդ քանակը նա բարեխղճորեն կողավորել, մշակել, գնահատել, մեկնաբանել և նկարագրել է՝ հնարավորություն ընձեռելով այդ հիմնահարցը դիտարկելու ավելի լայն սոցիալական համատեքստում: Ծավալուն այդ աշխատանքների արդյունքը ատենախոսության մեջ ամփոփված է 18 գծապատկերի, ինն աղյուսակի, երկու նկարի տեսքով: Երրորդ՝ ատենախոսը քաջատեղյակ է սփյուռքին և էթնիկ մեդիային վերաբերող արդի արևմտյան մի շարք հեղինակների հրատարակած աշխատություններին և դրանում տեղ գտած նոր մոտեցումներին, որոնք տեսական մեթոդաբանական տեսանկյունից դառնում են ատենախոսական աշխատանքի հարուստ հենք:

Գիտական տեսանկյունից ուզում եմ անդրադառնալ նաև ատենախոսության կիրառական կողմին և գիտական նորույթին: Հարկ է նշել, որ XIX-XX դդ. հայ մամուլի վերաբերյալ բավական ուշագրավ և մանրամասն պատմագիտական ուսումնասիրություններ են կատարվել, սակայն սփյուռքում էթնիկ մեդիայի դերի և ինքնության կառուցակցման հիմնախնդիրն առաջին անգամ իր ամբողջական ձևակերպումն է ստացել Ս. Բարսեղյանի ատենախոսական աշխատանքում: Այդ խնդրի վերլուծությունը կիրառական կարևոր նշանակություն ունի սփյուռքի քաղաքականությունների, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների զարգացման, մամուլի միջոցով սփյուռքի տարբեր համայնքներում կառույցների

գործառնման, համայնքների կարողությունների զարգացման, էթնոմշակութային ինքնության պահպանման գործում: Տեսական առումով հետազոտության արդյունքներն ունեն նաև գիտական նշանակություն էթնոսոցիոլոգիայի, սփյուռքագիտության, զանգվածային հաղորդակցության տեսությունների, մեդիա մարդաբանության և այլ գիտաճյուղերի հետագա զարգացման և կիրառման համար:

Անդրադառնանք ատենախոսության կառուցվածքին, որը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, սկզբնաղբյուրներից և օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից: Ներածությունում հեղինակը մասնագիտական գրականության և փաստացի նյութերի հիման վրա համոզիչ կարողացել է հիմնավորել թեմայի արդիականությունը, ինչպես նաև վերլուծել մինչ այժմ ՀՀ-ում և արտերկրում այդ ուղղությամբ կատարված գիտական աշխատանքները և այդ հիմնախնդրին ցուցաբերվող իր նոր մոտեցումները: Ներածությունում հեղինակը պատշաճ կերպով անդրադարձել է հետազոտության մեթոդաբանությանը, հստակ ձևակերպել է հետազոտության հիմնահարցը, նպատակը, առարկան, հիմնախնդիրները և դրա շնորհիվ ձեռք բերված գիտական նորույթը:

Առաջին գլուխը՝ «Էթնիկ մեդիայի հայեցակարգը», բաղկացած է երկու ենթագլխից: Հեղինակը հիմնականում անդրադառնում է սոցիալական գիտություններում մի շարք հեղինակների կողմից էթնիկ մեդիա հասկացության և ինքնության կառուցակցման տեսական մոտեցումներին և տարաբնույթ մեկնաբանություններին: Նշենք, որ այդ գլխում ատենախոսն օգտագործել է թեմային առնչվող ՀՀ-ում և հատկապես արտերկրում լույս տեսած վերջին տարիների հարուստ գրականությունը:

Երկրորդ գլուխը՝ «Էթնիկ մամուլի առանձնահատկությունները հայկական սփյուռքում (Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի հայկական երեք թերթերի օրինակով)», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «Հայկական սփյուռքի մամուլն «էթնիկ մեդիա» հասկացության համատեքստում», համեմատական վերլուծության միջոցով դուրս է բերել հայկական երեք համայնքներում՝ Լոս Անջելեսում, Թեհրանում, Մոսկվայում, էթնիկ մեդիայի կատարած կազմակերպական և համախմբող դերը: Այդ հարցերն ատենախոսը քննարկել է՝

հաշվի առնելով ընդունող երկրների միջավայրերի տարբերությունները, նրանցում էթնիկ խմբերի առանձնահատկությունները և կարգավիճակը, ինչպես նաև մեդիա ստեղծելու նրանց ավանդույթը: Անշուշտ, այդ առումով ներկայացված վերլուծական նյութը շատ կարևոր է, սակայն այս ենթագլուխն ամբողջապես հասկանալու համար այլ տեղեկատվական աղբյուրների շարքում էթնիկ մեդիայի դերի կարևորությունն ունի լրացուցիչ փաստարկման կարիք: Մասնավորապես, հեղինակը, հղում կատարելով այլ հետազոտական նյութերի, աղյուսակ 1-ում բերում է Գլենդելի (ԱՄՆ, Լոս Անջելես) երեք էթնիկ խմբերի շրջանում համայնքի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրների վերաբերյալ վիճակագրական համեմատական տվյալներ, որը, եթե չեմ սխալվում, իրականացվել է 2005 թվականին: Այդ տվյալների օգտագործումը, տեղեկատվության առումով, մեր կարծիքով, կորցրել է թարմությունը և այնքան էլ արժանահավատ չէ (ըստ այդ աղյուսակի՝ համացանցը որպես տեղեկատվական աղբյուր հայերի մոտ կազմել է զրո տոկոս, էջ 41), և հեղինակը զգուշությամբ պետք է անդրադառնա նման նյութերի: Երկրորդ ենթագլուխը, որը նվիրված է թերթերի բովանդակության ընդհանուր և համեմատական վերլուծությանը, ատենախոսն առանձնակի ուշադրություն է դարձրել վերը նշված երեք մամուլում հայկական թեմաների տեսակարար կշռին, հայրենիք-սփյուռք համամասնության և այլ թեմաների շրջանակներին՝ ներկայացնելով գծապատկերների ու աղյուսակների տեսքով: Վերջինս հետաքրքիր է դարձնում այդ ենթագլխի ընթերցումը, բայց որոշ դրույթներ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Այսպես՝ 51-րդ էջում ատենախոսը նշում է, որ «Երեք պարբերականների համեմատական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանն ամենադրականն է ներկայացրել «Ноев Ковчег»-ը, ապա՝ «Ասպարեզը», ամենաքիչը՝ «Ալիքը»: Հայաստան-սփյուռք առնչությունները գրեթե հավասար դրական գնահատականով են ներկայացվել բոլոր թերթերում: Մեփական համայնքին համեմա-տաբար ավելի քննադատական մոտեցում է ցույց տվել «Ասպարեզը», միաժամանակ՝ ամենաշատ բացասական տեղեկատվությունը տարածելով Հայաստանի մասին: Հայաստան-սփյուռք հարաբերությունների վերաբերյալ «Ноев Ковчег»-ն ամենաշատն է տարածել բացասական տեղեկատվություն: Պետք է ընդգծել, սակայն, որ, ընդհանուր առմամբ, միանշանակ բացասական տեղեկատվության տեսակարար կշիռը բավական փոքր է՝

չգերազանցելով երեք թերթերի նյութերի ողջ ծավալի 7.5 տոկոսը, գծապատկեր 5: Նպատակահարմար կլիներ, որ այդ հարցում տրվեին նաև որոշ բացատրություններ, թե ինչով է պայմանավորված Հայաստանի մասին բացասական նյութեր ներկայացնելու փաստը:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլխից, նվիրված է սփյուռքյան ինքնության ձևավորման գործում հայկական մամուլի դերին, որն ընթերցվում է հետաքրքրությամբ: Առաջին ենթագլուխը վերաբերում է հայկական երեք համայնքներում էթնիկ մամուլի կատարած գործառույթներին, երկրորդ ենթագլուխը՝ հայրենիք-սփյուռք հարաբերություններին, իսկ երրորդը՝ սփյուռքի մամուլին՝ որպես էթնիկ սահմանների պահպանման գործոն: Այս գլխում հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ երկրորդ և երրորդ գլուխների որոշ ենթագլուխներ թեև վերնագրերի առումով տարբեր են, սակայն բովանդակային առումով կան համընկնումներ (օրինակ՝ 2.1. վերնագրված է «Թերթերի բովանդակության ընդհանուր և համեմատական վերլուծություն», որտեղ հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերաբերյալ զետեղված են նաև մի քանի աղյուսակներ և գծապատկերներ, այնուհետև 3.2-ը՝ «Հայրենիք-սփյուռք հարաբերությունները հայկական մամուլում»):

Բարձր գնահատելով Ս. Բարսեղյանի աշխատանքը, որն առանց վարանելու կարող ենք համարել սփյուռքագիտության մեջ կարևոր ներդրում՝ միաժամանակ նշեմ մի քանի նկատառում և առաջարկություն.

- Նպատակահարմար կլիներ, որ հեղինակը նախաբանում ներկայացներ ատենախոսության մի քանի սկզբունքային հասկացությունների բացատրություն: Օրինակ՝ ատենախոսության վերնագրում օգտագործվում է «էթնիկ մամուլ» հասկացությունը, այնուհետև երկրորդ գլխի ենթավերնագրերում՝ «հայկական սփյուռքի մամուլ» և նմանատիպ այլ հասկացություններ: Արդյո՞ք բովանդակային, ծավալային առումով դրանք նույնն են, մանավանդ որ ատենախոսությունը հիմնված է երեք թերթերի բովանդակային վերլուծական նյութի վրա:
- Թեև հեղինակը նախաբանում մանրամասն հիմնավորում է իր հետազոտական օբյեկտի՝ այն է երեք կարևոր հայաշատ համայնքների՝

Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի, ինչպես նաև այնտեղ լույս տեսնող համապատասխանաբար «Ноев Ковчег» (Մոսկվա), «Ալիք» (Թեհրան) և «Ասպարեզ» (Լոս Անջելես) թերթերի ընտրության մասին, այնուհանդերձ, դրանց երկուսն ունեն նույն գաղափարախոսական ուղղվածությունը: Եվ քանի որ արդի սփյուռքի բազմազանության պայմաններում որոշ խմբեր չեն հարում դրան, հետևաբար բաց է մնում այդ թերթերի սպառման խնդիրը:

- Ատենախոսը աշխատանքում վերլուծել է ընտրված երեք պարբերականների վեց տարվա՝ 2005-2010 թթ. հրապարակումները: Դրանցում առկա նոր միտումներ բացահայտելու և համեմատական նյութ ստանալու առումով նպատակահարմար կլիներ, որ հեղինակը գոնե վերջին երկու տարվա կտրվածքով նույն այդ թերթերը ենթարկեր բովանդակային վերլուծության:
- Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը չբավարարվեր միայն հետազոտական մեկ գործիքով և իր դրված խնդիրների բազմակողմանի վերլուծության համար փորձագիտական հարցումներ իրականացներ դրանց խմբագիրների և այդ համայնքի որոշ ղեկավարների հետ:
- 2005-2010 թթ. երեք թերթերին վերաբերող աղյուսակները և գծապատկերները նպատակահարմար կլիներ ներկայացնել նաև ըստ տարիների, որոնք վերաբերվել են ՀՀ-ի ներքին կյանքի կամ ՀՀ-սփյուռք հարաբերությունների բեկումնային իրադարձություններին, ինչպես նաև բովանդակային որոշ մեջբերումներ կատարել հիմնախնդիրներին առնչվող թերթերի համարներից:
- Շատ լավ կլիներ, որ հեղինակն անդրադառնար նաև վերջին տարիներին այդ համայնքների կողմից էլեկտրոնային մամուլի և նշված թերթերի թողած ազդեցության խնդիրներին: Ինքնությունների ձևավորման հարցում ո՞րն է դրանց սահմանը, շատ կարևոր է հասկանալ, թե այդ պայմաններում, որ շերտերի կողմից է այն սպառվում:

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Սյուզաննա Սոսի Բարսեղյանի կողմից ներկայացված «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի շատ կարևոր տեսական և գործնական նշանակություն, իսկ եզրահանգումները կարող են նպաստել և խթանել սփյուռքի քաղաքականությունների, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների զարգացման, մամուլի միջոցով սփյուռքի համայնքների կարողությունների զարգացման և սփյուռքի հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների նախագծերի իրականացմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին շնորհել Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Միհրան Գալստյան

Պատմ. գիտ. դոկտոր Միհրան Գալստյանի ստորագրությունը հաստատում եմ.
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն,
Պատմ. գիտ. թեկնածու Արսեն Բոբոխյան
25.02.2020թ.